ապացոյց է, թէ կուլտուրան քայլ առ քայլ առաջ է գնացել ինչպէս կենդրոնում, նոյնպէս ծայր նահանգներում, որի չօշափելի վկան է Զուարթնոցի ճարտարապետութեամբ կերտուած Անիի Գագկաշէնը եւ Ուղտիքի-Տայոցքար Բանայի տաճարները: Պարխարեան աշխարհն իր յիշատակարաններով տարբերութիւն չունի կենդրոնական Այրարատեան աշխարհից, ո՛չ միայն յետամնաց չէ, այլ աւելի հսկայական է Նախա-Ուրարտական կերտուածքներով: Երեւի պատճառն այն է, որ Նայիրի երկրի բոլոր նահանգները աւելի դիւրամատչելի են եղել դրացի բարբարոս ցեղերի արշաւանքներին, աշխարհակալների յարձակումներին, որի հետեւանքով երկրի ձեռակերտները դարէ դար կործանուել եւ անհետացել են. իսկ սրակող լեռնաշղթաներով պաշտպանուած Ճորոխի խոր խոր ձորերը, դժուարամատչելի Տայոց աշխարհը կարողացել է դիմադրել եւ տոկալ: Տայքը նոյն իսկ իր հարիւրաւոր բ..լերի մշակութեամբ, պղնձի, արծաթի, ոսկու եւ երկաթի հալոցների կազմուածներով քայլ առ քայլ հետեւել է Եփրատի ափերի եւ հարաւային գաւառներին Աղձնիքին, Բալուին, Ամիդին, նոյն իսկ Միտանայի բովերի շահագործման եւ մշակման ընթացքին:

Ինչպէս որ խաղողի մշակութիւնը զարգացել է Եփրատի, Արաքսի ափերում,